



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ «ԽԵԼԱՑԻ» ՈՒՂԻՆԵՐԸ»

«Կոմպաս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոնն հասարակական կազմակերպությունը ««ՀամաՉարԿ» կոալիցիայի կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակում **2019 թվականի հունիսի 28-ին Գյումրիում** կազմակերպում է **«Հայաստանի համայնքների հիմնախնդիրները, դրանց լուծման «խելացի» ուղիները»** ստեղծագործական գաղափարների մրցույթ:

Ովքեր կարող են մասնակցել մրցույթին

Մրցույթին կարող են մասնակցել 14-30 տարեկան ՀՀ բոլոր մարզերի երիտասարդները: Մրցույթի ընթացքում մասնակիցները հնարավորություն կունենան բարձրաձայնել իրենց համայնքում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները և առաջարկել դրանց լուծման «խելացի»¹, նորարար ուղիները:

Մասնակցության համար անհրաժեշտ է

Մինչև 2019թ. հունիսի 24-ը hamazarkarmenia@gmail.com էլեկտրոնային փոստին ուղարկել ստեղծագործական շարադրություն կամ հակիրճ ծրագրային գաղափար՝ առավելագույնը 3 էջի սահմաններում: Նամակի վերնագրի դաշտում պետք է նշել «Ստեղծագործական գաղափարների մրցույթ-2019»:

Կապ կհաստատվի միայն նշված չափանիշներին համապատասխանող հայտերի հեղինակների հետ:

Մասնակիցներն իրենց գաղափարները կներկայացնեն **2019թ. հունիսի 28-ին Գյումրիում (աշխատանքները պետք է ներկայացնել PowerPoint սլայդերով):**

Լավագույն գաղափարի իրականացման համար կհատկացվի 1000\$-ին համարժեք դրամ World Vision միջազգային կազմակերպության հետ համագործակցության շնորհիվ:



*Լրացուցիչ հարցերի դեպքում դիմել ծրագրի համակարգող Մարինե Ավետիսյանին
Հեռ.՝ 077190895
Էլ փոստի հասցե՝ marineavetisyan95@gmail.com*

¹ Աշխարհում կան քաղաքներ, որոնք ունեն այնպիսի ենթակառուցվածքներ, որոնք հնարավորություն են տալիս այդ քաղաքներին կոչել «խելացի» (Smart city):

Սույն ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում իրականացվող ««ՀամաՉարԿ» կոալիցիայի կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում ««Կոմպաս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից՝ իր գործընկերներ «ՀԿ կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպության, «Դիվիզանի երիտասարդների համագործակցության կենտրոն» հասարակական կազմակերպության և «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ: